

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ք. Երևան

08.07.2014թ.

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով ՀՀ կրթության պետական տեսչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում, ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2014 թվականի հունվարի 9-ի №15-Ա/Ք հրամանով հաստատված ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի աշխատանքային ծրագրի, իրականացվել են.

1.Ստուգումներ Երևանի քաղաքապետարանի թվով 10 միջնակարգ դպրոցներում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 2014 թվականի հունվարի 24-ի հ. 01-Ա հանձնարարագիրը:

Նպատակը՝

Վերլուծել, գնահատել դպրոցների կրթական գործունեության ռիսկայնությունը, ձևավորել տվյալների բազա:

Ժամկետը՝

2014 թվականի փետրվարի 3-ից մինչև 14-ը:

Ստուգման արդյունքները, ձեռնարկված միջոցառումները և պետական լիազորված մարմնից ստացված պատասխանը՝

Ստուգման արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ են հայտնաբերվել թվով 6 դպրոցներում, որոնց վերաբերյալ կազմվել է 6 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ. տնօրեններին՝ 6, կառավարման խորհուրդների նախագահներին՝ 2:

Ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումներ.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Ուսումնական հաստատության անվանումը
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք	
7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջ. «Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն օրինակելի ուսումնական պլանի հիման վրա հաստատում է իր ուսումնական պլանը»:	108 մ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջ . «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատում է ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները»:	81 մ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջ. «Խորհուրդը վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը»:	108 մ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջ. «Խորհուրդը հաստատում է իր	81 մ/դ, 108 մ/դ

աշխատակարգը>>:	
13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. <<Ուսումնական հաստատությունը հանրակրթական ծրագիր(եր) կարող է իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում՝ համաձայն իր կանոնադրության: Ուսումնական հաստատության կողմից իրականացվող հանրակրթական ծրագրերն ամրագրվում են իր կանոնադրությամբ>>:	95 մ/դ
24-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ. <<Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի>>:	81 մ/դ, 107 մ/դ, 113 մ/դ
26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. << Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ունի համապատասխան որակավորում կամ վերջին տարվա փորձագրում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային սփած>>:	95 մ/դ, 107 մ/դ, 113 մ/դ,
<<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ.<<Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են կրթության մարտչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ>>:	95 մ/դ
ՀՀ կառավարության՝ 25.07.2002թ. N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության պահանջներ	
51-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատում է հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը»:	81 մ/դ
61-րդ կետի պահանջ. «խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ»:	108 մ/դ
68-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Հանրակրթական դպրոցի տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատման է ներկայացնում հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը»:	81 մ/դ
68-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. <<Տնօրենը իրականացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի, աշխատանքի ընդունումը, տեղաբաշխումը և աշխատանքային պայմանագրի լուծումը>>:	108 մ/դ
68-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջ. <<Հանրակրթական դպրոցի տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման համար>>:	81 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 25.05.2012թ. N537-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» պահանջներ	
20-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. << 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումն իրականացվում է խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար շաբաթական 34 ժամ ծավալով >>:	108 մ/դ
22-րդ կետի պահանջ. <<Հաստատության դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում սովորողների թիվը 1-9-րդ դասարաններում չի կարող գերազանցել 35-ը>>:	95 մ/դ
<<Ռուսաց լեզու>> առարկայի շաբաթական ժամերի քանակը	95 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 01.06.2013թ. N730-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» պահանջներ	
19-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. <<12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումն իրականացվում է խմբային եղանակով՝	108 մ/դ

<i>յուրաքանչյուր սովորողի համար շաբաթական 34 ժամ ծավալով>>:</i>		
19-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջ. <<Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է՝ ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբին, անկախ սովորողների թվից, հարկացնել շաբաթական միննույն քանակի դասաժամ>>:		108 մ/դ
21-րդ կետի պահանջ. <<Հաստատության դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում սովորողների թիվը 1-9-րդ դասարաններում չի կարող գերազանցել 35-ը>>:		95 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 02.08.2010 թվականի N 1262-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ		
2.1 կետի պահանջ. <<Ուսուցչի թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է բաշխել նույն դպրոցում համատեղությամբ չաշխատող համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներին>>:		108 մ/դ, 175 մ/դ
3-րդ կետի պահանջ. <<Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն հաստատության տվյալ թափուր աշխատատեղին ներկայացվող՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և 26-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնի նկարագրով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող անձր>>:		95 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 15.04.2013թ. N 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ		
3-րդ կետի պահանջ. <<Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է տրամադրել նույն հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող, այդ թվում՝ համատեղությամբ, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներին>>:		81 մ/դ
4-րդ կետի պահանջ. <<Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը՝ պահպանելով սույն կարգի պահանջները>>:		81 մ/դ
5-րդ կետի պահանջ. <<Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու, թափուր տեղը մրցութային կարգով չհամարվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), ժամկետային պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, ինչպես նաև ուսուցչի որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները՝ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի հաստատություններում>>:		81 մ/դ, 175 մ/դ
ՀՀ կառավարության՝ 14.10.2010թ. «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման պահանջներ		
IV հավելվածի պահանջ. <<Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ <u>համապատասխան որակավորմամբ</u> >>:		108 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.04.2011թ. N 280-Ն հրամանով հաստատված «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգ»-ի պահանջներ		
4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «...Դպրոցական կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների կազմը հաստատում է տնօրենը»:		95 մ/դ
14-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «...Հաղթողները խրախուսվում և պարգևատրվում են դպրոցի տնօրինության կողմից»:		95 մ/դ
ՀՀ կառավարության՝ 10.11.2011թ. N 1745-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի առեստավորման կարգ»-ի պահանջներ		

4-րդ կետի պահանջ. « Ուսումնական հաստատության ուսուցչի հերթական արեստավորումն անցկացվում է յուրաքանչյուր հինգ փարին մեկ անգամ՝ ուսումնական հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցին համապատասխան»:	95 մ/դ
7-րդ կետի պահանջ. «Տնօրենը յուրաքանչյուր փարվա համար օրենքով սահմանած կարգով կազմում է փյուլ փարվա արեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և մինչև փետրվարի 1-ը ներկայացնում փարածքային կառավարման մարմնի ղեկավարին՝ մարզպետին, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին, նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին»:	95 մ/դ
8-րդ կետի պահանջ. «Արեստավորման ենթակա ուսուցչին հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենն արեստավորումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր ծանուցում է փաստաթղթային արեստավորման, սույն կարգի և անցկացման ժամկետի մասին»:	95 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ»-ի պահանջներ	
14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «Առաջին դասարան ընդունվելիս ներկայացվում է ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը: Տնօրենի «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահվում է սովորողի անձնական գործում»:	81մ/դ
27-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «Առանց դիմումի դպրոցից հեռացած սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և ուսումնական փարվա վերջում հանվում է հաշվառումից»:	81մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.05. 2012թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատություն սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթական հաջորդ աստիճան փոխադրման կարգ»-ի պահանջներ	
17-րդ կետի պահանջ. «Սովորողին ամառային առաջադրանք փարու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասընթացը՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ»:	81մ/դ
28-րդ կետի պահանջ. «8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից փարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական»:	113 մ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 17.05.2011թ. N 571-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության 19-րդ կետ. « Հաստատությունում սովորողների ինքնավարության սկզբնական կառուցվածքային օղակը դասարանական ընդհանուր ժողովն է, որը ձևավորում է դասարանական խորհուրդը»:	95 մ/դ

Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

Ձեռնարկված միջոցառումներ

ՀՀ կրթության պետական տեսչության պետի գրությամբ Երևանի քաղաքապետին ներկայացվել են ստուգման արդյունքները՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների հետևանքները վերացնելու նպատակով: Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Երևանի հ.հ.81, 95, 107, 108, 113, 175 միջնակարգ դպրոցների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Հետադարձ կապ

Երևանի քաղաքապետարանից ստացվել է պատասխան գրություն, դպրոցների տնօրեններից՝ հանձնարարականների վերաբերյալ կատարողականներ:

Համաձայն քաղաքապետարանից ստացված գրության միջնակարգ դպրոցներում իրականացված ստուգումների վերաբերյալ հաշվետվությունը քննարկվել է, հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ արձանագրված խախտումների հետևանքները վերացնելու, ինչպես նաև թերություններն ու բացթողումները շտկելու նպատակով:

Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքները ներկայացված են ստորև.

N	Ուսումնական հաստատություն	Հանձնարարական		Կատարողական	
		Դպրոցի տնօրենին	Դպրոցի կառավարման խորհրդին	Դպրոցի տնօրենից	Դպրոցի կառավարման խորհրդից
1.	N 81 մ/դ դպրոց	3 կետ - 30.03.2014	-	3 կետ - 11.03.2014	-
2.	N 95 մ/դ դպրոց	4 կետ - 17.03.2014	-	4 կետ - 31.03.2014	-
3.	N 107 մ/դ դպրոց	1 կետ - 17.03.2014	-	1 կետ - 12.03.2014	-
4.	N 108 մ/դ դպրոց	4 կետ - 10.03.2014	3 կետ - 10.03.2014	4 կետ - 06.03.2014	3 կետ - 06.03.2014
5.	N 113 մ/դ դպրոց	3 կետ - 30.04.2014	-	3 կետ - 06.05.2014	-
6.	N 175 մ/դ դպրոց	1 կետ - 01.04.2014	-	1 կետ - 10.06.2014	-

2. Ստուգումներ Երևան քաղաքի թվով 12 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագրի 7-րդ կետը և ՀՀ կրթության տեսչության պետի 04.02.2014 թ-ի N02-Ա հանձնարարագիրը:

Նպատակը՝

Գնահատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ռիսկայնությունը:

Ժամկետը՝

2014 թվականի փետրվարի 10-ից 28-ը:

Ստուգման արդյունքները՝

Ստուգումներն իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 2013 թ-ի հունիսի 6-ի ՀՀՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N598-Ն որոշմամբ հաստատված N22, N23, N24 հավելվածների:

Ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան է ընդունվել 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև ստուգումն սկսելու օրը: Ստուգման ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, կազմվել է 3 ակտ: Համաձայն ՀՀ կայստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և

անցկացման մասին»» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: Ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու նպատակով ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումներ.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Ուսումնական հաստատության անվանումը
<p align="center">ՀՀ ԿԳ նախարարի՝ 07.12.2009 թ. N 1025-Ն հրամանով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0515 «Զարդակիրառական արվեստ» մասնագիտության «ուսկերիչ» որակավորման պետական կրթական չափորոշչի պահանջներ</p>	
<p>12-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. ««Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն»»:</p>	<p>Երևանի տեխնոլոգիական պետական քոլեջ</p>
<p>12-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. ««Ուսումնական պրակտիկական վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն»»:</p>	<p>Երևանի տեխնոլոգիական պետական քոլեջ</p>
<p align="center">ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.04.2012թ. N 254-Ն հրամանով հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»-ի պահանջներ</p>	
<p>10-րդ կետի պահանջ. ««Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նախագահը՝ Հաստատության տնօրենը (ռեկտորը), նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները»»:</p>	<p>Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան</p>
<p>19-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. ««Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը»»:</p>	<p>Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան</p>
<p>20-րդ կետի պահանջ. ««Դիմորդը հաստատություն ընդունվելու համար կարող է դիմել մինչև 2 մասնագիտության հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար և վճարովի ուսուցման հիմունքով»»:</p>	<p>Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան</p>
<p>24-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. ««Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում են հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական) նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների»»:</p>	<p>Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան</p>
<p align="center">ՀՀ ԿԳ նախարարի՝ 01.10.2010թ. N1455-Ն հրամանով հաստատված՝ «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ»-ի պահանջներ</p>	
<p>6-րդ կետի պահանջ. ««Նախընտրված մասնագիտության գծով հաստատված ուսումնական պլանով ուսանողի ուսումնառություն չանցած, չուսումնասիրած կամ ամփոփիչ ստուգում չանցած առարկաները և առարկաների ժամաքանակները 30 և ավելի տոկոս կազմող</p>	<p>Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջ</p>

<p>տարբերությունները, համարվում են ակադեմիական տարբերություններ:</p> <p>Ակադեմիական տարբերությունների ցանկը և ուսանողի կողմից դրանց հանձման անհատական ժամանակացույցը կազմում է ընդունող ուսումնական հաստատությունը՝ հիմք ընդունելով ուսումնական պլանը: Ուսանողի կողմից ակադեմիական տարբերությունների հանձման առավելագույն ժամկետը մեկ ամիս է:</p> <p>Տեղափոխումը կարող է կատարվել, եթե դրա արդյունքում, համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը պահպանվում է>>:</p>	
«ՀՀ կառավարության՝ 09.03.2006 թ. N 351-Ն որոշմամբ հաստատված՝ «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկ»-ի պահանջներ	
379-րդ կետի պահանջ. <<Դիմորդների փաստաթղթերի գրանցման մատյաններ>>:	Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան
425-րդ կետի պահանջ. <<Ասպիրանտների, ուսումնական հաստատություններ ավարտած կամ բարձր կուրսերից հեռացած ուսանողների, սովորողների անձնական գործեր>>:	Երևանի հ.5 արհեստագործական պետական ուսումնարան

Ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ստուգման արդյունքները ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարին: Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուսումնական հաստատությունների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

3. Երևան քաղաքի թվով 74 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ուսումնասիրություն

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 17.02.2014թ-ի N06-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 9-րդ մասերի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014 թվականի մարտի 3-ից մինչև մայիսի 16-ը:

Ուսումնասիրությունների արդյունքները՝

Ուսումնասիրության ընթացքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել թվով 36 դպրոցներում: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Ուսումնական հաստատության անվանումը
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք	

7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջ. «Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն օրինակելի ուսումնական պլանի հիման վրա հաստատում է իր ուսումնական պլանը»:	Երևանի հ. 1 հ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման ծրագրին»:	Երևանի հ. 1 հ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը»:	Երևանի հ. հ. 1 հ/դ, 53 հ/դ
11-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը ... հաստատում է իր աշխատակարգը»:	Երևանի հ. հ. 1 հ/դ, 4 հ/դ, 17 հ/դ, 53 հ/դ
12-րդ հոդվածի 18-րդ մասի 2-րդ կետի պահանջ. «Դպրոցի տնօրենը ղեկավարում է ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, <u>աջակցում է ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին</u> »:	Երևանի հ. 1 հ/դ
16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) դիմումի և <u>հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝</u> սույն օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Պետական ուսումնական հաստատությունների համար պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը»:	Երևանի հ. 1 հ/դ
24-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ. «Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 4 հ/դ, 5 հ/դ, 6 հ/դ, 19 հ/դ (2), 20 հ/դ, 24 հ/դ, 82 հ/դ, 104 հ/դ, 147 հ/դ, 194 հ/դ
25-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը. «Պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համապետության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:	Երևանի հ. 2 հ/դ, 84 հ/դ, 147 հ/դ, 194 հ/դ
26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ»:	Երևանի հ. հ. 1 հ/դ, 6 հ/դ, 14 հ/դ, 20 հ/դ, 37 հ/դ, 38 հ/դ, 64 հ/դ, 82 հ/դ, 117 հ/դ, 140 հ/դ, 164 հ/դ, 178 հ/դ, 197 հ/դ
«Կրթության մասին» ՀՀ օրենք	
18-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջ. « Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը»:	Երևանի հ. 52 հ/դ
ՀՀ կառավարության՝ 14.10.2010թ. թիվ 1391-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ և նկարագրեր»-ի պահանջներ	
VI գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հաստատության մանկապարտեզական կոլեկտիվի կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝	Երևանի հ. հ. 10 հ/դ, 14 հ/դ, 140 հ/դ, 152 հ/դ

մանկավարժական որակավորմամբ»:	
VIII գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության հատուկ մանկավարժը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»:	Երևանի հ.հ. 6 հ/դ, 84 հ/դ, 88 հ/դ
VIII գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության լոգոպեդը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»:	Երևանի հ. 1 հ/դ
IX գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության հոգեբանը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 88 հ/դ
X գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության սոցիալական մանկավարժի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք՝ մասնագիտություններ որակավորմամբ):»:	Երևանի հ.հ. 6 հ/դ, 48 հ/դ, 82 հ/դ, 88 հ/դ
XII գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:	Երևանի հ. հ. 1 հ/դ, 4 հ/դ, 35 հ/դ, 48 հ/դ, 147 հ/դ, 152 հ/դ
XIII գլխի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հասարակության լաբորանտի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա <<բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն»:	Երևանի հ. 4 հ/դ
ՀՀ կառավարության՝ 25.07.2002թ. N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության պահանջներ	
51-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Խորհուրդը հաստատում է հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 17 հ/դ, 53 հ/դ
61-րդ կետի պահանջ. «Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 4 հ/դ
68-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Տնօրենը՝ մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվեկշիռները»:	Երևանի հ. հ. 1 հ/դ, 4 հ/դ
68-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. «Տնօրենը՝ իրականացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, <u>մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի, աշխատանքի ընդունումը, տեղաբաշխումը և աշխատանքային պայմանագրի լուծումը</u> »:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 4 հ/դ
68-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջ. «Հանրակրթական դպրոցի տնօրենը սահմանում է աշխատողների աշխատանքային ռեժիմը»:	Երևանի հ. 1 հ/դ
68-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջ. «Տնօրենը՝ նշանակում է իր տեղակալներին, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (մեթոդական միավորումների) ղեկավարներին, կատարում է աշխատանքի բաշխում նրանց միջև՝ համաձայն կանոնադրության և Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հասարակության մանկավարժական աշխատողի պաշտոնների նկարագրերի»:	Երևանի հ. 1 հ/դ
68-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջ. «Տնօրենը՝ <<վերահսկողություն է	Երևանի հ. 1 հ/դ

իրականացնում ... հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ»:	
72-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու է հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար»:	Երևանի հ. 53 հ/դ
73-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջ. «Հանրակրթական դպրոցի տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը աջակցում է դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը»:	Երևանի հ. 53 հ/դ
78-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում, տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 4 հ/դ 53 հ/դ
80-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը քննարկում է հանրակրթական դպրոցի զարգացման ծրագիրը և երաշխավորում է այն խորհրդի հաստատմանը»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 147 հ/դ
80-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը քննարկում է հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի ... նախագծերը...»:	Երևանի հ. 53 հ/դ
81-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին»:	Երևանի հ. 53 հ/դ
81-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում <<հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և ներկայացնում է տնօրենի հաստատմանը»:	Երևանի հ. 1 հ/դ
83-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից ընտրված մշտական քարտուղարը»:	Երևանի հ. 17 հ/դ
84-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր»:	Երևանի հ. հ. 17 հ/դ, 147 հ/դ
92-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ քննարկում է ... ուսումնական պլանների նախագծերը»:	Երևանի հ. 1 հ/դ
92-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասավարներին) նախապատրաստում է արեստավորման»:	Երևանի հ. 1 հ/դ
92-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումները՝ կազմակերպում են մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ»:	Երևանի հ. 1 հ/դ
92-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջ. «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին»:	Երևանի հ. 1 հ/դ
92-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջ. «Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին»:	Երևանի հ. 1 հ/դ
96-րդ կետի պահանջ. «Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական	Երևանի հ. 53 հ/դ

<i>խորհրդի անդամ է»:</i>	
ՀՀ ԿԳ նախարարի՝ 18.03.2010թ. N 113-Ն հրամանով հաստատված ««Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»	
15-րդ կետի պահանջ. «Օրենքով սահմանված դեպքերում՝ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20 օրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու՝ համաձայն սույն կարգի»:	Երևանի հ. 1 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 02.08.2010 թ. N 1262-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ	
2.1 կետի պահանջ. «Ուսուցչի թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է բաշխել նույն դպրոցում համալրողությամբ չաշխատող համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին»:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 5 հ/դ, 6 հ/դ, 82 հ/դ, 104 հ/դ, 194 հ/դ
3-րդ կետի պահանջ. «Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն հաստատության տվյալ թափուր աշխատատեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և 26-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնի նկարագրով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող անձը»:	Երևանի հ.հ. 20 հ/դ, 64 հ/դ, 117 հ/դ, 197 հ/դ
45-րդ կետի պահանջ. « Մրցույթի չկայանալու կամ դիմումներ չներկայացնելու դեպքում 10-օրյա ժամկետում հայտարարվում է նոր մրցույթ»:	Երևանի հ.100 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 15.04.2013թ. N 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ	
3-րդ կետի պահանջ. «Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է տրամադրել նույն հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող, այդ թվում համալրողությամբ, համապատասխան որակավորում ունեցող մասնագետին»:	Երևանի հ.հ. 4 հ/դ, 6 հ/դ, 12 հ/դ, 35 հ/դ, 178 հ/դ
4-րդ կետի պահանջ. «Մրցույթը հայտարարվում է թափուր տեղ առաջանալու օրվանից 7-օրյա ժամկետում...»:	Երևանի հ.հ. 6 հ/դ, 100 հ/դ
5-րդ կետի պահանջ. «Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու ... դեպքում ժամկետային պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք...»:	Երևանի հ.հ. 84 հ/դ, 100 հ/դ, 147 հ/դ
15 -րդ կետի պահանջ/լրամշակված ՀՀ ԿԳ նախարարի 30.07.2013թ. 1001-Ն հրամանով /. «Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը»:	Երևանի հ.հ. 37 հ/դ, 164 հ/դ
16-րդ կետի պահանջ /լրամշակված ՀՀ ԿԳ նախարարի 30.07.2013թ. 1001-Ն հրամանով /. « Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում 1/ դիմում, .. »:	Երևանի հ. 53 հ/դ
27-րդ կետի պահանջ /լրամշակված ՀՀ ԿԳ նախարարի 30.07.2013թ. 1001-Ն հրամանով /. « Հանձնաժողովը, մրցույթի անցկացման օրը հրավիրված նիստում, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ընդունում է մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մերժելու մասին որոշում և հաստատում է մրցույթի մասնակիցների անվանացանկը»:	Երևանի հ. 53 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 25.05.2012թ. № 537-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջներ	

<p>19-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով»:</p>	<p>Երևանի հ. 1 հ/դ</p>
<p>21-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ սկսած 5-րդ դասարանից, նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում»:</p>	<p>Երևանի հ. 1 հ/դ</p>
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 01.06.2013թ. № 730-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջներ</p>	
<p>1-ին կետի պահանջ. «Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ... »:</p>	<p>Երևանի հ.հ. 19 հ/դ, 52 հ/դ</p>
<p>18-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին...»:</p>	<p>Երևանի հ. 1 հ/դ, 164 հ/դ</p>
<p>18-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է <<Նոգեբանություն>> (7-8-րդ դասարաններ), առարկայի ուսուցումը: Նշված առարկայի ուսուցումը այլ դասարաններում հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով նախարարության հաստատմանը ներկայացվելու դեպքում»:</p>	<p>Երևանի հ. 164 հ/դ</p>
<p>18-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «Հաստատությունը կարող է ներդնել նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով նախարարության հաստատմանը ներկայացնելու դեպքում և հաստատության ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով ... դասագրքերով, ...այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից»:</p>	<p>Երևանի հ. հ. 35 հ/դ, 100 հ/դ</p>
<p>20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ սկսած 5-րդ դասարանից, նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում»:</p>	<p>Երևանի հ.հ. 1 հ/դ, 52 հ/դ</p>
<p>21-րդ կետի պահանջ . «Հաստատության դասարանի միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող՝ փարրական և միջին դպրոցների համար,... ընդ որում, սովորողների թիվը փարրական և միջին դպրոցների դասարանում չի կարող գերազանցել 35-ը ...»:</p>	<p>Երևանի հ.հ. 19 հ/դ, 35 հ/դ, 88 հ/դ, 146 հ/դ, 176 հ/դ</p>
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 27.08.2013թ. N 1046-Ա/Ք հրամանով հաստատված 2013-2014 ուսարարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի ցանկով սահմանված պահանջներ:</p>	
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 08.04.2010թ. N 439-Ն հրամանով հաստատված</p>	<p>Երևանի հ.52 հ/դ</p>

հանրակրթական հիմնական դպրոցի 3-9-րդ դասարանների <<Անգլերեն>> առարկայի չափորոշիչի և ծրագրի պահանջներ:	
ՀՀ ԿԳ նախարարի՝ 28.06. 2012թ. հունիսի 28-ի N 653-Ա/Ք հրամանով հաստատված հանրակրթական միջին դպրոցի երրորդ օտար լեզվի (անգլերենի) առարկայական ծրագրի պահանջ:	Երևանի հ.հ. 6 հ/դ, 48 հ/դ, 64 հ/դ, 179 հ/դ, 194 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 03.05.2012թ. N 388-Ն հրամանով հաստատված <<Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ>>-ի պահանջներ	
32-րդ կետի պահանջ. «Ուսումնական տարվա ընթացքում, մինչև սույն կարգի 33-րդ կետով սահմանված ժամկետում 120-200 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողի հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությանից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում, մինչև մայիսի 15-ը»:	Երևանի հ. 53 հ/դ
35-րդ կետի պահանջ. «Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողի բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ»:	Երևանի հ. 53 հ/դ
37-րդ կետի պահանջ. «Քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները»:	Երևանի հ. 53 հ/դ
38-րդ կետի պահանջ. «Բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն»:	Երևանի հ. 53 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ>>-ի պահանջներ	
13-րդ կետի պահանջ. «Օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, երկքաղաքացի անձանց, ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրացի, երեխաների ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչը) անկախ ազգային պատկանելությունից»:	Երևանի հ.հ. 35 հ/դ, 122 հ/դ
14-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Երեխային /սովորողին/ դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողը ներկայացնում է. 1) դիմում, իսկ առաջին դասարան ընդունվելիս նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք»:	Երևանի հ. 14 հ/դ
14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «Առաջին դասարան ընդունվելիս ներկայացվում է ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը: Տնօրենի <<իսկականի հետ ճիշտ է>> մակագրությամբ պատճենը պահվում է սովորողի անձնական գործում»:	Երևանի հ. 1 հ/դ
14-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Երեխային /սովորողին/ դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողը ներկայացնում է <u>դպրոցից դպրոց սովորողի տեղափոխման թերթիկը</u> (բացառությամբ հիմնական դպրոցից առանձին գործող ավագ դպրոց ընդունվելիս)»:	Երևանի հ. 104 հ/դ
14-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. «Երեխային /սովորողին/ դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողը ներկայացնում է <u>սովորողի անձնական գործը</u> (առաջինից բարձր դասարաններ ընդունվելիս)»:	Երևանի հ.հ. 17 հ/դ, 104 հ/դ, 152 հ/դ
22-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի ընդունելությունը դպրոց կատարվում է. 1) կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի	Երևանի հ. 53 հ/դ

բացակայության դեպքում՝ ա. միջնակարգ կրթության 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճաններում հետագա ուսումնառության դասարանը չի կարող լինել ավելի բարձր, քան սովորողի տարիքային խմբին համապատասխան դասարանը և որոշվում է տնօրենի հրամանով սրեղծված մասնագիտական խմբի գրավոր առաջարկությամբ՝ գիտելիքների համարժեքության արդյունքների հիման վրա»:	
27-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է ծնողի դիմումի հիման վրա»:	Երևանի հ. 17 հ/դ
Աշխատանքային օրենսգիրք	
84-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջ. « Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում նշվում է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը»:	Երևանի հ. 1 հ/դ
84-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջ. « Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում նշվում է իրավական ակտի ընդունման հիմքը»:	Երևանի հ. 1 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. մայիսի 17-ի հ.571-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության» կետերի պահանջներ:	Երևանի հ.հ. 1 հ/դ, 53 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հունվարի 18-ի N 23-Ն որոշմամբ գործածության երաշխավորված փաստաթղթերի ցանկ	
Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյանի լրացման կարգի կետերի պահանջներ:	Երևանի հ. 1 հ/դ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 2012թ. հունիսի 28-ի թիվ 653-Ա/Ք հրամանով հաստատված հանրակրթական միջին դպրոցի երրորդ օտար լեզվի (ֆրանսերենի) առարկայական ծրագրի պահանջ:	Երևանի հ. 20 հ/դ

Ձեռնարկված միջոցառումներ

Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 36 արձանագրություն: Հայտնաբերված խախտումները և նրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, Երևանի քաղաքապետին: Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

Հետադարձ կապ

Տրված հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է, հետևաբար կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները կներկայացվեն 2014 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությունում:

4. ՀՀ մարզերում գործող թվով 22 ավագ դպրոցներում ստուգում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 18.03.2014թ. N° 04-Ա հանձնարարագիրը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջի կատարումը:

Ժամկետը՝

2014 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 16-ը:

Ստուգման արդյունքները՝

Ստուգումների արդյունքում 22 ավագ դպրոցներից 19-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 19 ակտ:

Ստուգմամբ պարզվել է.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Դպրոցի անվանումը
«Կրթության մասին» ՀՀ օրենք	
41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում»:	Կապանի հ.2 ա/դ,
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք	
11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջ. «Խորհուրդը՝ կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ ուսումնական հաստատության լրացուցիչ միջոցների հաշվին»:	Գորիսի հ.1 ա/դ,
11-րդ հոդված, 1-ին մաս, 8-րդ կետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է ներքին գնահատման արդյունքները»:	Ճամբարակի ա/դ, Ձորագյուղի ա/դ Սևանի ա/դ,
11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջ. «Խորհուրդը վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը»:	Ձորագյուղի ա/դ,
11-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջ. «Խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը»:	Ձորագյուղի ա/դ, Սևանի ա/դ,
11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջ. «Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են անդամին լիազորած մարմնի հիմնավորված հեղկանջի դեպքում»:	Գյումրու մշակույթի վարժարան,
12-րդ հոդվածի 18-րդ մասի 5-րդ ենթակետի պահանջ. «Պետական ուսումնական հաստատության տնօրենը իրականացնում է օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ»:	Ձորագյուղի ա/դ,
13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Ուսումնական հաստատությունը հանրակրթական ծրագիր(եր) կարող է իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում՝ համաձայն իր կանոնադրության: Ուսումնական հաստատության կողմից իրականացվող հանրակրթական ծրագրերն ամրագրվում են իր կանոնադրությամբ»:	Գյումրու հ.1 ա/դ, Գյումրու մշակույթի վարժարան ,
24-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ. «Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի»:	Գյումրու հ.37 ա/դ (5), Սիսիանի ա/դ (5), Գյումրու մշակույթի վարժարան (4), Գյումրու հ.42 ա/դ (4), Ձորագյուղի ա/դ (2), Գորիսի հ.1 ա/դ (2), Գյումրու հ.3 ա/դ (1), Սևանի ա/դ (1),
26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ունի համապատասխան որակավորում կամ վերջին տարի փարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 փարվա աշխատանքային ստաժ»:	Ոսկեբափի ա/դ (1), Վարդենիսի ա/դ (1), Սիսիանի ա/դ (2), Ձորագյուղի ա/դ (2), Սևանի ա/դ (2),
34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ. «Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատումն	Ճամբարակի ա/դ, Ձորագյուղի ա/դ,

իրականացվում է փարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական փարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները»:	Սևանի ա/դ,
34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ. «Ներքին գնահատման հաշվետվությունը փնտրենը մինչև ընթացիկ փարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը»:	Ճամբարակի ա/դ, Ձորագյուղի ա/դ, Սևանի ա/դ,
«Պեդական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք	
5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ. «Պեդական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման»:	Գորիսի հ.1 ա/դ,
ՀՀ կառավարության՝ 14.10.2010թ. «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման պահանջներ	
IV հավելվածի VIII մասի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը (լրգուպեդ, փիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենամանկավարժ) պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»:	Գյումրու հ.45 ա/դ,
IV հավելվածի X մասի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք որակավորմամբ»	Ոսկեպափի ա/դ, Մարտունու ա/դ, Սևանի ա/դ,
IV հավելվածի XII մասի 3-րդ կետի պահանջ. «Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:	Գյումրու հ.26 ա/դ Սևանի ա/դ,
ՀՀ կառավարության՝ 25.07.2002թ. N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պեդական հանրակրթական ուսումնական հաստատություն» պեդական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության պահանջներ	
51-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Պեդական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատում է հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը»:	Գյումրու մշակույթի վարժարան, Գյումրու հ.42 ա/դ, Ձորագյուղի ա/դ,
61-րդ կետի պահանջ. «Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ»:	Գյումրու հ.3 ա/դ, Գյումրու հ.42 ա/դ, Ճամբարակի ա/դ,
68-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Դպրոցի փնտրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է փնտրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները»:	Ձորագյուղի ա/դ,
68-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Հանրակրթական դպրոցի փնտրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը»:	Ձորագյուղի ա/դ,
76-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջ. «Դասարանի ղեկավարը հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը»:	Կապանի հ.2 ա/դ (11),
78-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է փնտրենի հրամանով՝ մեկ ուսումնական փարի ժամկետով:	Գյումրու հ. 42 ա/դ, Գյումրու մշակույթի վարժարան,

Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում»:	Վարդենիկի կրթահամալիր,
81-րդ կետ 2-րդ ենթակետ. «Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում հանրակրթական դպրոցի ավագ դասարանի հոսքերի ձևավորման մասին»:	Վարդենիկի կրթահամալիր,
84-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ»:	Գյումրու հ.1 ա/դ, Գյումրու հ.2 ա/դ, Գյումրու հ.42 ա/դ, Գյումրու մշակույթի վարժարան,
94-րդ կետի պահանջ. «Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ...: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ...»:	Գյումրու հ.1 ա/դ, Գյումրու հ.42 ա/դ,
ՀՀ կառավարության՝ 08.04.2010թ. N 439-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ»-ի պահանջներ	
Հավելված 2-ի 4-րդ գլխի (Սովորողի ուսումնական առաջադիմության գնահատումը) 2-րդ կետի պահանջ. «Գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ արեստավորում)»:	Սևանի ա/դ,
հավելված 2-ի 4-րդ գլխի (Սովորողի ուսումնական առաջադիմության գնահատումը) 3-րդ կետի պահանջ. 3-րդ կետի պահանջ. «Ընթացիկ և ամփոփիչ գնահատումներն իրականացվում են ուսուցչի կամ ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ուսումնական առարկաների, և գրանցվում են դասամատյանում»:	Սևանի ա/դ,
ՀՀ կառավարության՝ 04.03.2010թ. N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի պահանջ	
1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), եռօրյա ժամկետում ընդունում է որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին»:	Սևանի ա/դ,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 18.03.2010թ. «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 113-Ն հրամանի պահանջ	
15-րդ կետի պահանջ. «Օրենքով սահմանված դեպքերում՝ խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20-օրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու»:	Կապանի հ.2 ա/դ,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 02.08.2010թ. N 1262-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ	
2.1 կետի պահանջ. «Ուսուցչի թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է բաշխել նույն դպրոցում համատեղությամբ չաշխատող համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին»:	Գյումրու հ.26 ա/դ,
22 կետի 1-ին ենթակետի պահանջ. «Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ 1) ... մեկ ներկայացուցիչ լիազորված պետական մարմնի ներկայացմամբ, ...»:	Գյումրու հ.42 ա/դ,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 15.04.2013թ. N 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ»-ի պահանջներ	
3-րդ կետի պահանջ. «Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը կարող է տրամադրել նույն Հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող, այդ թվում՝ համատեղությամբ, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին»:	Կապանի հ.2 ա/դ,
15-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ «Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ»:	Սիսիանի ա/դ,
18-րդ կետի պահանջ. «Հանձնաժողովը, մրցույթի անցկացման օրը հրավիրված	Սիսիանի ա/դ,

նիստում, քննության է առնում ներկայացված փաստաթղթերը, ընդունում է մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու մասին որոշում և հաստատում է մրցույթի մասնակիցների անվանացանկը»:	
3-րդ կետի պահանջ /լրամանով ՀՀ ԿԳ նախարարի 30.07.2013թ. 1001-Ն հրամանով /. «Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է նույն Հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող մինչև 1 դրույթ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին»:	Գյումրու հ.37 ա/դ (1),
ՀՀ ԿԳ նախարարի՝ 25.05.2012թ. N 537-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջներ	
դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի 2-րդ ենթակետի պահանջ. «Նախարարությունը կարող է երաշխավորել «Կիրառական տնտեսագիտություն», ... առարկաների ուսուցումը՝ հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության հաստատմանը ներկայացնելու դեպքում»:	Սիսիանի ա/դ,
22-րդ կետի պահանջ. «Հաստատության դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում սովորողների թիվը 1-9-րդ դասարաններում չի կարող գերազանցել 35-ը»:	Գյումրու հ.3 ա/դ,
Հավելված 1.1-ի 3-րդ աղյուսակի հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակի խախտում:	Գորիսի հ.1 ա/դ,
43-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «12-րդ դասարանում ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է անհատական և խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների անհատական և խմբային ուսուցման ժամանակացույց»:	Ճամբարակի ա/դ,
44-րդ կետի 1-ին ենթակետի «ա» մասի պահանջ. «Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար»:	Վարդենիսի ա/դ,
47-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ. «Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլան (տե՛ս Հավելված 1.1-ի Աղյուսակ 2)»:	Ճամբարակի ա/դ, Վարդենիսի ա/դ, Սևանի ա/դ,
47-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» մասի պահանջ. «11-րդ դասարանում հումանիտար հոսքի ենթահոսքերից յուրաքանչյուրի սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը»:	Վարդենիսի ա/դ,
47-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջ. «Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլան (տե՛ս Հավելված 1.1-ի Աղյուսակ 3) »:	Վարդենիսի ա/դ, Սևանի ա/դ,
47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Ընդհանուր հոսքում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ դասարանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի մեջ մտնող առարկաներին, իսկ հոսքային ուսուցմամբ դասարաններում՝ նաև հոսքային ուսուցման առարկաներին»,	Սևանի ա/դ,
47-րդ կետի 7-րդ ենթակետի «ը» մասի պահանջ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել Ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և»:	Վարդենիսի կրթահամալիր,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 01.06.2013թ. N 730-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջներ	
ընդհանուր պարզաբանումների 1-ին կետի պահանջ. «Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն ՀՀ կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ....»	Գյումրու հ.26 ա/դ,
Հավելված 1.1-ի 3-րդ աղյուսակի հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակի	Գորիսի հ.1 ա/դ,

խախտում:	Գործիսի հ. 4 ա/դ,
18-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում»:	Ճամբարակի ա/դ,
41-րդ կետի պահանջ. «...ընդհանուր հանրակրթական և հոսքային առարկաների դասերին սովորողների թիվը չի կարող գերազանցել 30-ը»:	Գյումրու հ.37 ա/դ,
46-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար»:	Վարդենիսի ա/դ,
46-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին»:	Գյումրու մշակույթի վարժարան,
47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջ. «Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարությանը հաստատման ներկայացնելու դեպքում»:	Գյումրու մշակույթի վարժարան (8), Մարտունու ա/դ (1)
49-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջ. «Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլան (տե՛ս Հավելված 1.1-ի Աղյուսակ 2)»:	Ճամբարակի ա/դ, Վարդենիսի ա/դ,
49-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջ. «Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլան (տե՛ս Հավելված 1.1-ի Աղյուսակ 3)»:	Ճամբարակի ա/դ, Վարդենիսի ա/դ,
49-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» ենթակետի պահանջ. «Եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընդրում է մեկ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մնացած երեք բնագիտական առարկաներից մեկը՝ շաբաթական երկու ժամով, ...»:	Գյումրու հ.42 ա/դ, Սևանի ա/դ,
49-րդ կետի 6-րդ ենթակետի «ը» մասի պահանջ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և»:	Վարդենիսի կրթահամալիր,
ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված առարկայական ծրագրի պահանջի կատարում	
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 02.12.2008թ. N 1078-Ա/Ք հրամանով հաստատված «Հասարակագիտություն» առարկայի ավագ դպրոցի «Հումանիտար» հոսքի 11-րդ և 12-րդ դասարանների ծրագրերի պահանջ:	Վարդենիսի ա/դ,
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 17.03.2011թ. N 216-Ա/Ք հրամանով հաստատված «Ինֆորմատիկա» առարկայի ավագ դպրոցի «Բնագիտամաթեմատիկական» հոսքի 12-րդ դասարանի ծրագրի պահանջ:	Վարդենիսի ա/դ,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 17.05.2011թ. N 571-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն	
29-րդ մասի պահանջ. «Աշակերտական խորհրդի նախագահին ընտրվում է հաստատության սովորողների կողմից՝ փակ, գաղտնի քվեարկության միջոցով, ծայրերի պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան սովորողների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ»:	Գյումրու հ.2 ա/դ,
ՀՀ ԿԳ նախարարի՝ 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ»-ի պահանջներ	
18-րդ կետի պահանջ. «Ավագ դպրոց ընդունվելիս սովորողի ծնողը ներկայացնում է հիմնական կրթության վկայականի բնօրինակը և սույն կարգի 14-րդ կետով պահանջվող փաստաթղթերը (1) դիմում, ... »:	Սևանի ա/դ (1),
22-րդ կետի 1-ին կետի «ա» ենթակետի պահանջ. «Այլ երկրներից ՀՀ վերադարձած սովորողի ընդունելությունը դպրոց կատարվում է. 1) կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի բացակայության դեպքում՝ ա. ... և որոշվում է տնօրենի հրամանով սրեղծված մասնագիտական խմբի գրավոր առաջարկությամբ՝ գիտելիքների համարժեքության արդյունքների հիման վրա»:	Գյումրու հ.1 ա/դ (2), Գյումրու հ.2 ա/դ (2),

<p>25-րդ կետի պահանջ. «Մնացած դեպքերում այլ երկրներում ռուսերենով (կամ այլ օտար լեզվով) ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած Հայաստանի Հանրապետություն քաղաքացիների երեխաները ուսումնական տարվա առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս կարող են մինչև ուսումնական տարվա ավարտը, ... սովորել ռուսերենով (կամ այլ օտար լեզվով) ուսուցմամբ դասարանում՝ այդ ընթացքում հայերենի իմացությունը ապահովելու և սահմանված ժամկետը լրանալուց հետո հայերենով ուսուցմամբ դասարան տեղափոխվելու պայմանով»:</p>	<p>Գյումրու հ.2 ա/դ (1),</p>
<p>27-րդ կետի պահանջ. «Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝ 1) ծնողի դիմումի հիման վրա ... »:</p>	<p>Սևանի ա/դ (1),</p>
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.04.2011թ. N 280-Ն հրամանով հաստատված «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգ»-ի պահանջ</p>	
<p>4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ. «... Դպրոցական կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների կազմը հաստատում է տնօրենը»:</p>	<p>Ձորագյուղի ա/դ,</p>
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 22.06.2010թ. N 609-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգ»-ի պահանջներ (հավելված 1)</p>	
<p>18-րդ կետի պահանջ. «Ավարտական փաստաթղթերը լրացվում են ընթերցելի ... : Ավարտական փաստաթղթերում ջնջում կամ ուղղում կատարելն արգելվում է: Շրջանավարտի անունը, հայրանունը, ազգանունը գրվում է ծննդյան վկայականի կամ անձնագրի տվյալներին համապատասխան»:</p>	<p>Սևանի ա/դ,</p>
<p>22-րդ կետի պահանջ. «Ավարտական փաստաթղթերում լրացվում են ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարեկան (ուսումնառության վերջին 2 դասարանների) և ամփոփիչ արեստավորման (քննական) գնահատականները»:</p>	<p>Սևանի ա/դ,</p>
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.05. 2012 N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատություն սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ արեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթական հաջորդ աստիճան փոխադրման կարգ»-ի պահանջ</p>	
<p>28-րդ կետի պահանջ. «8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական»:</p>	<p>Սևանի ա/դ (2):</p>

Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ստուգման արդյունքները ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարին: Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ավագ դպրոցների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Հետադարձ կապ

Տրված հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է, հետևաբար կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները կներկայացվեն 2014 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությունում:

5. ՀՀ մարզերի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ստուգում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 7-րդ կետը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 11.03.2014թ. № 03-Ա հանձնարարագիրը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014 թվականի մարտի 17-ից ապրիլի 30-ը:

Ստուգման արդյունքները՝

Ստուգումների արդյունքում 39 ուսումնական հաստատություններից 5-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 5 ակտ:

Ստուգմամբ պարզվել է.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Ուսումնական հաստատության անվանումը
«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք	
7-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջ. «Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները համապատասխան գործադրությունների առաջարկությունների հիման վրա մշակում և հաստատում են պետական կրթական չափորոշիչների համապատասխանեցված ուսուցանվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,...»:	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ
12-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջ. «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակտիկաները իրագործվում են այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն»:	Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
ՀՀ ԿԳ նախարարի՝ 21.06.2006 թ.՝ «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» N 638-Ն հրամանի պահանջներ	
14-րդ կետի պահանջ.« Պետական ամփոփիչ ստուգման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները»:	Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ, Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
23-րդ կետի պահանջ. « Մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտին, որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով տրվում է գերազանցության դիպլոմ»:	Արարատի պետական քոլեջ
25-րդ կետի պահանջ.« Պետական որակավորող հանձնաժողովի բոլոր նիստերը արձանագրվում են արձանագրությունների հատուկ գրքում: Պետական որակավորող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կազմվում են համաձայն	Արարատի պետական քոլեջ

<i>սահմանված ձևերի»:</i>		
31-րդ կետի պահանջ. «Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պարզենը նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին»:		Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ
32-րդ կետի պահանջ. «Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով հաստատվում է պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շրջանավարտների համապատասխան որակավորման և պետական ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) շնորհումը և ուսումնական հաստատության ավարտումը»:		Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
34-րդ կետի պահանջ. «Պետական որակավորող հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քննարկվում է մասնագիտական ուսումնական հաստատության խորհրդում, որի հիման վրա մշակվում են ուսումնական գործընթացը կատարելագործելու առաջարկություններ»:		Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011 թ. N 1278-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգ»-ի պահանջ		
10-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ. «Նախընտրված մասնագիտության համապատասխան կիսամյակի սկզբից, եթե ուսումնառած և նախընտրված մասնագիտության համար սահմանված ուսումնական պլանների ակադեմիական փարբերությունները չեն գերազանցում 8 առարկան (կամ մոդուլները)»:		Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.՝ «ՀՀ հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին» N609-Ն հրամանի պահանջ		
2-րդ հավելվածի 19-րդ կետի պահանջ. «Ուսումնական հաստատություններում դիպլոմների ստացման և բաշխման հաշվառումը կատարվում է հատուկ մատյաններում, որոնցում գրառվում են հետևյալ տվյալները... »:		Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
ՀՀ ԿԳ նախարարի 07.12.2009 թ. N 1024-Ն հրամանով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2311 «Հասարակական սնունդ» մասնագիտության «Խոհարար» որակավորման պետական կրթական չափորոշիչի պահանջ		
12-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ . «Ուսումնական պրակտիկայի վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն»:		Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ
ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. N 254-Ն հրամանով հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»-ի պահանջներ		
8-րդ կետի պահանջ. «Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է օգոստոսի 26-27-ը: Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո »:		Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան
«Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում, 2009 «Կապի սարքավորումների շահագործում» մասնագիտությունների ուսումնական պլանների՝ պետական ամփոփիչ ստուգման անցկացման ժամկետին ներկայացվող պահանջը:		Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ
2401 «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի 5-րդ գլխի 1-ին կետի պահանջը. «Ուսումնական պարապմունքները վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն		Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ

մասնագիտական կրթության որակավորում...»:	
ՀՀ ԿԳ նախարարի 2009 թվականի ապրիլի 10-ի №291-Ա/Ք հրամանով ուսումնարանին տրված լիցենզիայ պահանջները:	Արարատի պետական քոլեջ
ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական կրթական չափորոշիչի պահանջ . «Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն»:	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ

Ձեռնարկված միջոցառումներ

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուսումնական հաստատությունների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

6. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում թեմատիկ ստուգումներ

Հիմքը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.05.2014թ-ի N328-Ա հրամանը, ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թ-ի աշխատանքային ծրագրի 9-րդ կետը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 26.05.2014թ-ի N05-Ա հանձնարարագիրը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի կատարում:

Ժամկետը՝

2014 թվականի մայիսի 27-ից հունիսի 20-ը:

Թեմատիկ ստուգման արդյունքները՝

Թեմատիկ ստուգում է իրականացվել թվով 3 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Թեմատիկ ստուգման արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել: ՀՀ կրթության և գիտության նախարարի 31.05.2014թ-ի 354-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի մայիսի 23-ի «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ստուգումներ իրականացնելու մասին » N 328-Ա հրամանը: Նույն օրը իրականացվող թեմատիկ ստուգումը դադարեցվել է:

7. Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում ուսումնասիրություն

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014թ. աշխատանքային ծրագրի 4-րդ կետը, ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 16.05.2014թ.-ի N 25-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

<<Կրթության պետական տեսչության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014 թվականի հունիսի 9-30-ը:

Ուսումնասիրության արդյունքները՝

Ուսումնասիրության արդյունքները կներկայացվեն 2014 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությունում:

8. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի աշխատանքային ծրագրի 6-րդ կետը և ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնությունը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 22.05.2014թ. N 26-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարում:

Ժամկետը՝

2014 թ. հունիսի 12-ից 19-ը:

Ուսումնասիրությունների արդյունքները՝

1. Հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը

Ուսումնասիրության ընթացքում բաժնի կողմից ներկայացվել են մանկապարտեզներում իրականացված ստուգայցերի վերաբերյալ զեկուցագրեր: Ըստ ներկայացված զեկուցագրերի բաժնի կողմից վերահսկվել է մանկապարտեզների սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի պահպանումը, ճաշացանկը, աշխատակիցների և երեխաների անձնական գործերի ամբողջականությունը, խմբերի խտությունը, փաստացի հաճախող երեխաների ընդհանուր թիվը, ռեժիմային պահերը, ուսումնամեթոդական պլանների համապատասխանությունը, իրականացվել են պարապմունքների լսումներ, քննարկումներ:

Ըստ ստուգայցերի վերաբերյալ ներկայացված զեկուցագրերի՝ բաժնի կողմից լիարժեք չի համակարգվել ոլորտում իրականացվող կրթադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

Զեկուցագրերում նշված ստուգայցերի արդյունքները, հայտնաբերված խախտումներն ու թերությունները, պարապմունքների լսումները ընդհանրական են, հիմնավորված չեն, երբեմն կրում են նկարագրական բնույթ: Հետագա գործողություններում անդրադարձ չի արվել հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման աշխատանքներին և արդյունքներին:

2. Հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման կազմակերպումը

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում քաղաքապետարանի կողմից մանկապարտեզներում չի կազմակերպվել փորձարարական և նորարարական գործունեության իրականացում:

Խախտվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» ենթակետի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են նախադպրոցական ուսումնական հասարակություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացում» պահանջի կատարումը:

Ձեռնարկված միջոցառումները

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ Արմավիրի մարզպետին: Իրականացվել է քննարկում Արմավիրի քաղաքապետարանում, քաղաքապետին ներկայացվել են առաջարկություններ հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

9. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և էկոլոգիայի բաժնում ուսումնասիրություն

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի աշխատանքային ծրագրի 6-րդ կետը և ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնությունը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 22.05.2014թ. N 26-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարում:

Ժամկետը՝

2014 թ. մայիսի 29-ից հունիսի 4-ը:

Ուսումնասիրությունների արդյունքները՝

1. Քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի կանոնադրության առկայությունը:

Քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված չէ քաղաքապետարանի աշխատակազմում գործող կառուցվածքային ստորաբաժանումների (բաժինների) կանոնադրությունների առկայությունը: Կանոնադրության 45-րդ կետով բաժնի գործառույթները սահմանված են ընդամենը երեք կետով, ինչը չի ներառում կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերով համայնքի ղեկավարին և տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված գործառույթների ամբողջ ծավալը:

2. Բաժնի 2012, 2013 թվականների տարեկան աշխատանքային ծրագրերի կատարողականները:

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում բաժնի կողմից տարեկան աշխատանքային ծրագրեր չեն կազմվել և աշխատակազմի ղեկավարին չեն ներկայացվել, մինչդեռ համաձայն կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի. «Բաժնիների պետերը աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը...»: Բաժնի աշխատակիցները, որպես համայնքային ծառայող տարին երկու անգամ կիսամյակային հաշվետվություններ են ներկայացրել կատարված աշխատանքների մասին, հղումներ կատարելով ընդամենը իրենց պաշտոնների անձնագրերով սահմանված գործառույթներին:

3. Հաստատությունների կանոնադրությունների հաստատումը և դրանցում փոփոխությունների կատարումը:

Քաղաքապետարանի ենթակայության թվով 9 մանկապարտեզների կանոնադրություններում չի կատարվել «ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 3-րդ բաժնի 17-րդ կետի փոփոխությունը (նոր խմբագրությամբ):

4. Հաստատությունների ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում Աբովյանի քաղաքապետի՝ 11.10.2012թ. N 159 կարգադրությամբ անձը նշանակվել է «Աբովյանի N 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն: Վերջինս ավարտել է ՀՀ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, ունի աշխարհագրության ուսուցչի որակավորում, սակայն վերջին 10 տարում չունի մանկավարժական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Աբովյանի քաղաքապետի՝ 02.11.2012թ. N 212 կարգադրությամբ անձը նշանակվել է «Աբովյանի N 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն: Վերջինս ավարտել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, ունի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժի, կարատեի մարզիչի որակավորում, սակայն վերջին 10 տարում նույնպես չունի մանկավարժական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Խախտվել է ՀՀ ԿԳ նախարարի՝ 26.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի փարիֆատրակավորման բնութագրերին ներկայացվող պահանջը:

Տնօրենների անձնական գործերի ուսումնասիրությունից պարզվեց, որ N 3 և N 10 մանկապարտեզների տնօրենների անձնական գործերում առկա չեն աշխատանքային պայմանագրեր (առկա են նշված մանկապարտեզների տնօրենների նշանակումների վերաբերյալ անհատական իրավական ակտերը):

Թվով 7 մանկապարտեզների տնօրենների աշխատանքային պայմանագրերում, բացառությամբ վերոնշյալ մանկապարտեզների, նշված է 5-օրյա աշխատանքային շաբաթ, 8

աշխատանքային ժամ, իսկ ըստ մանկապարտեզների ներքին կարգապահական կանոնների բոլոր մանկապարտեզների աշխատանքային օրը 9-ժամյա է:

5. Հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Ուսումնասիրության ընթացքում բաժնի կողմից ներկայացվել է մանկապարտեզներում իրականացված ստուգայցերի վերաբերյալ ցուցակ (2013 թվականի մարտ ամսից սկսած): Նշված ժամանակահատվածում իրականացված ստուգայցերի վերաբերյալ կազմված «Գրությունները» ստորագրված չէին: Ըստ «Գրություններ»-ի բաժնի կողմից լիարժեք չի համակարգվել ոլորտում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ պատշաճ վերահսկողությունը: «Գրություններ»-ում նշված ստուգայցերի արդյունքները, հայտնաբերված խախտումներն ու թերությունները, պարապմունքների լուսնները ընդհանրական են, հիմնավորված չեն, երբեմն կրում են նկարագրական բնույթ: Հետագա գործողություններում անդրադարձ չի արվել հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման աշխատանքներին և արդյունքներին:

6. Հաստատությունների հաստիքային ցուցակների հաստատումը:

Մանկապարտեզների 2014 թվականի հաստիքացուցակների ուսումնասիրությունից պարզվեց, որ, չնայած այն հանգամանքին, որ մանկավարժական աշխատողների հաստիքները հաստատվել են սահմանված կարգով, սակայն մանկապարտեզի աշխատողների միջև այդ հաստիքները նպատակային չեն բաշխվել (Աբովյանի N N 3, 4, 7, 9, 10 մանկապարտեզներ):

7. Հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման կազմակերպումը:

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում քաղաքապետարանի կողմից մանկապարտեզներում փորձարարական և նորարարական գործունեության իրականացում չի կազմակերպվել:

Խախտվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» ենթակետի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են նախադպրոցական ուսումնական հաստիքայինություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացում» պահանջի կատարումը:

Ձեռնարկված միջոցառումները

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ Կոտայքի մարզպետին: Աբովյանի քաղաքապետին ներկայացվել են առաջարկություններ հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

10. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող հարցերի բաժնում ուսումնասիրություն

Հիմքը՝

«ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի աշխատանքային ծրագրի 6-րդ կետը և ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնությունը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 22.05.2014թ. N 26-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարում:

Ժամկետը՝

2014 թ. հունիսի 5-ից 12-ը:

Ուսումնասիրությունների արդյունքները՝

1. Քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող հարցերի բաժնի կանոնադրության առկայությունը:

Կանոնադրության 35-րդ կետով սահմանվում է, որ «աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն ... ունեն կանոնադրություններ, որոնք քաղաքապետի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից», մինչդեռ քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումները (բաժինները), ներկայումս չունեն առանձին կանոնադրություններ:

Օրենքով և այլ իրավական ակտերով համայնքին վերապահված լիազորությունները, բաժինների համար (որպես առանձին գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների) գործող կանոնադրությամբ սահմանված չեն:

2. Հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Ուսումնասիրության ընթացքում բաժնի կողմից ներկայացվել են մանկապարտեզներում իրականացված ստուգայցերի վերաբերյալ զեկուցագրեր: Ըստ ստուգայցերի վերաբերյալ կազմված զեկուցագրերի բաժնի կողմից լիարժեք չի համակարգվել ոլորտում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը: Չեկուցագրերում նշված ստուգայցերի արդյունքները, հայտնաբերված խախտումներն ու թերությունները, պարապմունքների լուումները ընդհանրական են, հիմնավորված չեն, երբեմն կրում են նկարագրական բնույթ: Հետագա գործողություններում անդրադարձ չի արվել հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման աշխատանքներին և արդյունքներին:

3. Հաստատությունների հաստիքային ցուցակների հաստատումը:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա է հետևյալ անհամապատասխանությունը. 12 մանկապարտեզների տնօրենների աշխատանքային պայմանագրերում նշված է 5-օրյա աշխատանքային շաբաթ, 9 աշխատանքային ժամ, իսկ ըստ որոշ մանկապարտեզների ներքին կարգապահական աշխատակարգի աշխատանքային օրը 8-ժամյա է (մանկապարտեզները չունեն ներքին կարգապահական կանոններ):

Բոլոր 12 մանկապարտեզներում դաստիարակներին հատկացվել է 1 հաստիքային միավոր, այն դեպքում, երբ սահմանված կարգի համաձայն 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 8-ժամյա դաստիարակի աշխատանքին հատկացվում է 1,12, իսկ 9-ժամյա աշխատանքին՝ 1,25 հաստիքային միավոր:

Խախտվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի պահանջը:

4. Հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման կազմակերպումը:

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում քաղաքապետարանի կողմից մանկապարտեզներում փորձարարական և նորարարական գործունեության կազմակերպում չի իրականացվել:

Խախտվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» ենթակետի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացում» պահանջի կատարումը:

5. Բաժնի կողմից հաստատությունների գործունեության համար շենքային և գույքային անհրաժեշտ պայմանների առկայության ուսումնասիրումը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը համայնքի ղեկավարին:

Բաժնի կողմից 2012թ. հոկտեմբերի 25-ին և 2013թ. հոկտեմբերի 22-ին համապատասխան զեկուցագրերով քաղաքապետին է ներկայացվել քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների շենքային և գույքային պայմանների առկա վիճակի մասին տեղեկանքը և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ: Ուսումնասիրությունն ընդգրկող ժամանակահատվածում համայնքի բյուջեյով մանկապարտեզների կապիտալ վերանորոգման համար միջոցներ չեն նախատեսվել:

Ձեռնարկված միջոցառումները

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ Կոտայքի մարզպետին: Իրականացվել է քննարկում Հրազդանի քաղաքապետարանում, քաղաքապետին ներկայացվել են առաջարկություններ հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

11. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքների նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2014 թվականի աշխատանքային ծրագրի 6-րդ կետը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 08.05.2014թ. N 21-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե» կետերի, 2-րդ և 9-րդ մասերի պահանջների կատարում:

Ժամկետը՝

2014 թ. մայիսի 12-ից 31-ը:

Ուսումնասիրությունների արդյունքները՝

<p>ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան, Աբովյան քաղաքների և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի մանկապարտեզների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ</p>	
<p>Ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական կազմ:</p>	
<p>ՀՀ ԿԳ նախարարի՝ 26.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված ՀՀ նախադպրոցական ուսումնական պարտությունների ղեկավար և մանկավարժական կազմի փորձաքննության բնութագրերին ներկայացվող պահանջներ</p>	
<p>III մասի 3-րդ կետի պահանջ . «Մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով փեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն և վերջին յոթ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ»:</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 10 մանկապարտեզ</p> <p>ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 11 մանկապարտեզ</p>
<p>IV մասի 3-րդ կետի պահանջ .«Դաստիարակը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տարի տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ»: Ծանոթացում՝ (մ.)՝ մանկապարտեզ, (դ*)՝ դաստիարակ, (փ/դ*)՝ փոխարինող դաստիարակ</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4 մ.՝ 1 (դ*), 1 (փ/դ*), N 8 մ.՝ 1 (դ), 1 (փ/դ), N 9 մ.՝ 1 (դ), 1 (փ/դ), N 12 մ.՝ 2 (փ/դ),</p> <p>ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 2 մ.՝ 3 (դ), N 4 մ.՝ 1 (դ), N 9 մ.՝ 2 (դ), 2 (փ/դ), N 10 մ.՝ 2 (փ/դ),</p> <p>ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 12 մ.՝ 2 (դ),</p>
<p>V մասի 3-րդ կետի պահանջ. «...նախադպրոցական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»:</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 13 մանկապարտեզ</p>
<p>VII մասի 3-րդ կետի պահանջ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 16 մանկապարտեզ</p>
<p>VIII մասի 3-րդ կետի պահանջ. «...լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժը (ուսուցիչ, խմբավար) պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ:....»: Ծանոթացում՝ (խ*)՝ խմբավար, (փ/խ*)՝ փոխարինող խմբավար</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4 մ.՝ 1 (խ*), 2 (փ/խ*), N 7 մ.՝ 1 (փ/խ), N 8 մ.՝ 2 (խ), N 11 մ.՝ 1 (փ/խ), N 12 մ.՝ 1 (խ), N 15 մ.՝ 1 (խ), N 16 մ.՝ 1 (խ)</p>
<p>ՀՀ կառավարության՝ 26.12.2002թ. նիստի N 54 արձանագրությամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 37-րդ կետի «ժ» ենթակետի պահանջ. «տնօրենը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար» (Վերապատրաստում):</p>	<p>ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4 մ.՝ 9, N 6 մ.՝ 8, N 7 մ.՝ 7, N 8 մ.՝ 10, N 9 մ.՝ 7, N 11 մ.՝ 9, N 12 մ.՝ 12, N 13 մ.՝ 14, N 15 մ.՝ 12, N 16 մ.՝ 10 մանկավարժական աշխատողներ</p> <p>ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 2 մ., N 10 մ., տնօրենները, Աբովյանի N 2 մ. (բոլոր), N 3 մ.՝ 3, N 9 մ.՝ 12-ը, N 10 մ.՝ 5 մանկավարժական աշխատողներ</p>

	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 1, N 2, N 3, N 5, N 6, N 7, N 8, N 9, N 10, N 11, N 12 մանկապարտեզների ղեկավար և մանկավարժական կազմը
Մանկապարտեզներ երեխաների ընդունելություն, խմբերի կոմպլեկտավորում	
«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Նախադպրոցական փարիքային փուլերն են՝ ա) վաղ փարիք՝ մինչև 3 տարեկան, բ) կրտսեր նախադպրոցական՝ 3-ից մինչև 5 տարեկան, գ) ավագ նախադպրոցական՝ 5-ից մինչև 6 տարեկան», 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների խմբերի համալրումը, որպես կանոն, իրականացվում է փարիքային... հատկանիշներով»: պահանջներ. (խմբերը չեն կոմպլեկտավորվել ըստ երեխաների փարիքային առանձնահատկությունների):	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4, N 5, N 8, N 9, N 11, N 12, N 13, N 16 մանկապարտեզներ
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյան քաղաքի բոլոր 9 մանկապարտեզներում
	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 1, N 5, N 7, N 8, N 9, N 10, N 11 մանկապարտեզներ
«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված փարիքային փուլերի պահանջ. «ավագ նախադպրոցական փարիքը 5-ից մինչև 6 տարեկանն է».	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4 մ.՝ 4, N 6 մ.՝ 2, N 8 մ.՝ 6, N 9 մ.՝ 5, N 11 մ.՝ 6, N 12 մ.՝ 2, N 15 մ.՝ 2 երեխա,
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 4 մ.՝ 1, N 7 մ.՝ 4, N 9 մ.՝ 1 երեխա
ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հասարիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի պահանջ (չի հատկացվել մեթոդիստի հասարիք):	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N N 1, 2, 6, 7, 8, 9, 12 մանկապարտեզներ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն հրամանի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հասարիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» հավելված 2-ի պահանջ (առկա են գերբեռնված խմբեր):	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 4, N 5, N 7, N 8, N 9, N 11, N 12, N 13, N 15, N 16 մանկապարտեզներ
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյան քաղաքի բոլոր 9 մանկապարտեզներում
Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում, ուսումնամեթոդական հագեցվածություն	
«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի	
11-րդ հոդվածի «բ» կետի՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունն ապահովում է նախադպրոցական կրթության մակարդակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին»,	
11-րդ հոդվածի «գ» կետի. «Նախադպրոցական ուսումնական հաստատությունն երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջության ամրապնդման համար սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններ...»,	
20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ « Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի ապահովումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է» պահանջներ,	
ՀՀ ԿԳ նախարարի՝ 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով հաստատված ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի փարիքաորակավորման բնութագրերով տնօրենին և դաստիարակին ներկայացվող պաշտոնային պարտականությունների պահանջներ:	
Տարափարիք խմբում պարապմունքները չեն իրականացվում փարբերակված ուսուցման սկզբունքով:	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 12 մանկապարտեզ
	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 5 մանկապարտեզ
Խմբասենյակներում սրեղծված չէ զարգացնող միջավայր և (կամ) առկա չեն ուսումնամեթոդական աշխատանքները կանոնակարգող դիդակտիկ նյութեր, պարագաներ, խաղալիքներ:	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 2, N 15 մանկապարտեզներ
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի NN 2, 3, 5, 7, 9, 10, 12 մանկապարտեզներ

	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի NN 1, 2, 3, 5, 7, 8, 9, 11 մանկապարտեզներ
«ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 37-րդ հոդվածի «ժա» ենթակետի և (կամ) 39-րդ կետի պահանջները:	
Կրթադաստիարակչական գործընթացի իրականացման նկատմամբ վերահսկողությունը փնտրենների կողմից լիարժեք չի իրականացվում:	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի NN 2, 11, 12 մանկապարտեզներ
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի NN 10, 12 մանկապարտեզներ
	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի NN 2, 3, 7, 8, 12 մանկապարտեզներ
Կրթադաստիարակչական գործընթացի իրականացման նկատմամբ վերահսկողությունը մեթոդիստի կողմից լիարժեք չի իրականացվում:	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի N 11 մանկապարտեզ
	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի NN 2, 4, 5, 9, 10, 12 մանկապարտեզներ,
Հաստատության տարեկան աշխատանքային պլանը հաստատված չէ փնտրենի կողմից, աշխատանքային պլանում պահպանված չեն բովանդակային և կառուցվածքային պահանջները, գրված է հաշվետվության ձևով, հիմնախնդիրները նշված չեն: Տնօրենը չունի աշխատանքային պլան:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 12 մանկապարտեզ
Հաստատության տարեկան, փնտրենի ու դաստիարակների աշխատանքային պլաններում պահպանված չեն բովանդակային և կառուցվածքային պահանջները, դաստիարակների աշխատանքային պլաններում բացակայում է վերլուծության բաժինը:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 3, N 9 մանկապարտեզներ
Տնօրենը և դաստիարակները չունեն եռամսյա հաշվետվություններ:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N5 մանկապարտեզ
Պարապմունքների բաշխման ժամանակացույցը չի համապատասխանում համալիր ծրագրի պահանջներին:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի NN 1, 3, 12 մանկապարտեզներ
Ռեժիմի կարգացույցը չի համապատասխանում համալիր ծրագրի պահանջներին:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի NN 2, 3, 12 մանկապարտեզներ
Բոլոր տարիքային խմբերում օրվա կարգացույցը կազմված չէ ըստ երեխաների տարիքային առանձնահատկությունների:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 9 մանկապարտեզ
Դաստիարակների կողմից աշխատանքների պլանավորումը և ուսուցման պրոցեսի կազմակերպումը չի համապատասխանում չափորոշիչի պահանջներին:	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի NN 1, 2, 3, 12 մանկապարտեզներ
2013-2014 ուսումնական տարվա աշխատանքային պլանները չեն բխում առաջնահերթ խնդիրների և տարեկան պլանի բովանդակությունից, իսկ մանկավարժական խորհրդի նիստերում քննարկված թեմաները՝ տարեկան աշխատանքային պլանից:	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի թիվ 12 մանկապարտեզ
Մանկավարժական խորհրդում չեն քննարկել տարեկան աշխատանքային պլանը, պարապմունքների բաշխման ժամանակացույցը և չեն ընդունվել համապատասխան որոշումները, դաստիարակների ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման մեջ առկա են հետևյալ թերությունները՝ պարապմունքի պլանավորման մեջ նշված չեն թեման և նպատակը, պարապմունքների անցկացումը պլանավորվում է ինչպես օրվա առաջին, այնպես էլ երկրորդ կեսին, թերի է հաշվառման բաժինը, բացակայում է կատարված աշխատանքի վերլուծությունը, պահպանված չէ կառուցվածքային հաջորդականությունը:	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի N 2 մանկապարտեզ
«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «գ» կետի՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջության ամրապնդման համար ապահովում է սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններ...»:	

ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. N 857 «Նախադպրոցական կազմակերպությունների N 2.III.1 սանիտարական նորմերը հաստատելու մասին» հրամանի 11.5.կետի պահանջ:	
Երեխաների անհատական անկողնային պարագաները, սրբիչները, անձնական հիգիենայի պարագաները մակնշված չեն.	ՀՀ Արմավիրի մարզ. Արմավիրի N 3 մանկապարտեզ
ՀՀ ԿԳ նախարարի՝ 28.07.2011թ. «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթուղթը, գործածության և վարման կարգը հաստատելու մասին» N 870-Ն հրամանի պահանջ.	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի NN 2, 6, 7, 9, 12 մանկապարտեզներ Աբովյանի NN 4, 5, 6, 9, 10, 12 մանկապարտեզներ
ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ (ներքին կարգապահական կանոններ).	ՀՀ Կոտայքի մարզ. Հրազդանի NN 2, 4, 6, 7, 8, 9, 11, 12, 16 մանկապարտեզներ
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ. «Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման».	ՀՀ Կոտայքի մարզ. Աբովյանի NN 2, 3, 4, 5, 6, 9, 10, 12 մանկապարտեզներ

Ձեռնարկված միջոցառումները

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ Կոտայքի, Արմավիրի մարզպետներին: Իրականացվել է քննարկումներ Հրազդանի, Արմավիրի քաղաքապետարաններում, ներկայացվել են առաջարկություններ հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ, տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

12. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանում և համայնքային ենթակայության թվով 24 նախադպրոցական ուսումնական հաստատություններում դիտարկում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 11.02.2014թ. № 05-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014թ. փետրվարի 20-ից 28-ը:

Դիտարկման արդյունքները՝

- Դիտարկման արդյունքում պարզվել է.
1. <<Արարատ կրթահամալիր>> ՆՈՒՀ-ի գործադիր տնօրենի պաշտոնի նշանակումը չի համապատասխանեցվել ՀՀ օրենսդրության պահանջին. *չի լուծվել տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:*
 2. Գյումրու 24 ՆՈՒՀ-երում փորձարարական և նորարարական գործունեություն չի կազմակերպվել:
 3. Գյումրու 24 ՆՈՒՀ-երի կանոնադրությունների համապատասխանեցման գործընթացն օրինակելի կանոնադրության պահանջներին ընթացքի մեջ է:
 4. Գյումրու 24 ՆՈՒՀ-երին հանձնված անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի պետական գրանցման ապահովման գործընթացը շարունակվում է:

5. Գյումրու 24 ՆՈՒՀ-երի հաստիքացուցակները մասամբ են համապատասխանեցվել օրինակելի հաստիքացուցակին:

6. Գյումրու 12 ՆՈՒՀ-երի («Արևիկ», «Լապտերիկ», «Ծիածան», «Նոր պարտեզ», «Լիլիթ», «Նանուլիկ», «Լիանա», «Գոհար», «Փարոս», «Մանկիկ», «Երազանք», «Զանգակ») շենքերի վերանորոգման և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման, բակային խաղահրապարակի վերանորոգման և հագեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն ընթացքի մեջ են:

7. Գյումրու 5 ՆՈՒՀ-երում («Անուլիկ», «Էլլիթիա», «Նանուլիկ», «Լուսաստղիկ», «Ծիածան») չեն լուծվել որակավորման պահանջների խախտումով ընդունված 5 մանկավարժական աշխատողների աշխատանքային պայմանագրերը:

8. Գյումրու 2 ՆՈՒՀ-երի («Անի պարտեզ», «Ձյունիկ») տնօրենների կողմից հիմնադրին գրավոր առաջարկություն չի ներկայացվել դաստիարակների արձակուրդի ժամանակահատվածում փոխարինողի և դաստիարակների պարտադիր բժշկական քննության գործընթացի իրականացման նպատակով միջոցներ հատկացնելու համար:

9. Գյումրու 6 ՆՈՒՀ-եր («Նանուլիկ», «Երազանք», «Գոհար», «Փարոս», «Լիանա», «Գյումրու Մանկիկ») չեն ապահովել «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի գործածության և վարման կարգի» պահանջների կատարումը:

10. Գյումրու 8 ՆՈՒՀ-երի («Հուսո Առագաստ», «Գոհար», «Արձագանք», «Ծիածան», «Գյումրու Մանկիկ», «Էլլիթիա», «Անի պարտեզ», «Լուսաստղիկ») խմբերում երեխաների ընդգրկվածությունը չի համապատասխանում սահմանված նորմերին:

11. Գյումրու 9 ՆՈՒՀ-եր («Արևիկ», «Նանուլիկ», «Գոհար», «Ծիածան», «Լիանա», «Գյումրու Մանկիկ», «Նոր պարտեզ», «Էլլիթիա», «Լուսաստղիկ») տարիքային խմբերը կոմպլեկտավորելիս հաշվի չեն առել երեխաների տարիքային առանձնահատկությունները:

12. Գյումրու 5 ՆՈՒՀ-եր («Զանգակ», «Լիլիթ», «Փարոս», «Անի պարտեզ», «Ձյունիկ») մասամբ են ապահովել նախադպրոցական կրթական համալիր ծրագրերի պահանջների կատարումը:

13. Գյումրու 5 ՆՈՒՀ-եր («Կարմիր գլխարկ», «Լուսաստղիկ», «Նանուլիկ», «Գոհար», «Գյումրու Մանկիկ») տարատարիք համալրված խմբերում կրթադաստիարակչական աշխատանքները չեն իրականացրել տարբերակված ծրագրով:

14. Գյումրու 21 ՆՈՒՀ-եր («Նոր Պարտեզ», «Զանգակ», «Փարոս», «Ձյունիկ», «Անի պարտեզ», «Լիլիթ», «Կարմիր գլխարկ», «Լապտերիկ», «Հենգել և Գրետել», «Արձագանք» «Ծիածան», «Լիանա», «Արևիկ», «Լուսաստղիկ», «Նանուլիկ», «Արարատ», «Գյումրու Մանկիկ», «Էլլիթիա», «Թոռնիկ Մանուշակ», «Գոհար», «Երազանք») մասամբ են ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 21.01.2010թ-ի 05-Ա/Ք հրամանով հաստատված մեթոդական փաստաթղթերին ներկայացվող պահանջները, մասնավորապես.

14.1 Գյումրու 8 ՆՈՒՀ-եր («Լուսաստղիկ», «Գոհար», «Ծիածան», «Լիանա», «Փարոս», «Էլլիթիա», «Անի պարտեզ», «Երազանք») մասամբ են ապահովել խմբասենյակների համապատասխան զարգացնող միջավայրի առկայությունը, իսկ 3 ՆՈՒՀ-եր («Նոր պարտեզ», «Նանուլիկ», «Արևիկ») չեն կատարել:

14.2 Գյումրու 3 ՆՈՒՀ-եր («Էլլիթիա», «Անի պարտեզ», «Նոր պարտեզ») պարապմունքների բաշխման գրաֆիկները չեն համապատասխանեցրել ծրագրային պահանջներին:

14.3 Գյումրու 11 ՆՈՒՀ-եր («Փարոս», «Լիլիթ», «Կարմիր գլխարկ», «Լապտերիկ», «Հենգել և Գրետել», «Արձագանք», «Ծիածան», «Լիանա», «Արևիկ», «Անի պարտեզ»,

«Ձյունիկ») չեն ապահովել մանկապարտեզի դաստիարակների աշխատանքային պլանների կազմակերպմանը ներկայացվող պահանջների կատարումը:

15. Գյումրու 14 ՆՈՒՀ-եր («Փարոս», «Զանգակ», «Արարատ», «Գոհար», «Լուսաստղիկ», «Գյումրու Մանկիկ», «Նանուլիկ» «Լապտերիկ», «Լիանա», «Հենզել և Գրետել», «Նոր Պարտեզ», «Անի պարտեզ», «Ձյունիկ», «Ծիածան») մասամբ են իրականացնել վերահսկողություն կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և կրթական ծրագրերի կատարման նկատմամբ:

Ձեռնարկված միջոցառումները

Դիտարկման արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման նախարարներին, ՀՀ Շիրակի մարզպետին, Գյումրու քաղաքապետին:

13. ՀՀ Շիրակի և Սյունիքի մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում դիտարկում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 04.06.2014թ. № 29-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014թ. հունիսի 10-23-ը:

Դիտարկման արդյունքները՝

Դիտարկումների արդյունքները կներկայացվեն 2014 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությունում:

14. Երևան քաղաքում, ՀՀ Կոտայքի և Արմավիրի մարզերում գործող ավագ դպրոցների 12-րդ դասարաններում սովորողների պետական ավարտական քննությունների անցկացման և գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի ուսումնասիրություն

Հիմքը՝

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 11.06.2014թ. N33-Ա և 23.06.2014թ. N34-Ա կարգադրությունները:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և 9-րդ մասի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

2014թ. հունիսի 12-13-ը և 24-25-ը:

Ուսումնասիրության արդյունքները՝

2014թ. հունիսի 12-13-ը Երևան քաղաքի, ՀՀ Կոտայքի և Արմավիրի մարզերում գործող թվով 14 ավագ դպրոցներում իրականացվել է «Մաթեմատիկա», իսկ հունիսի 24-25-ը Երևան քաղաքի թվով 21 ավագ դպրոցներում՝ «Հայոց պատմություն» առարկաների

պետական ավարտական քննությունների անցկացման և գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

Երևանի Գ. Մարգարյանի անվան հ. 94 ավագ դպրոցի աշակերտի թեստի պատասխանների պատճենահանված ձևաթղթում առկա է եղել ընդամենը մեկ նշում (ճիշտ), և աշխատանքը պետք է գնահատվեր 1 միավոր: Դպրոցի ստուգող հանձնաժողովի կողմից քննական ձևաթղթում կատարվել են նշումներ, ինչի արդյունքում գնահատականը փոփոխվել է, և ըստ դպրոցի ներկայացրած տվյալների՝ քննական թեստը գնահատվել է 15 միավոր:

Նույն բնույթի անհամապատասխանություններ են արձանագրվել նաև Երևանի Լ. Արիսյանի անվան հ. 127 ավագ դպրոցի կողմից ներկայացված պետական ավարտական քննության ցուցակներում արձանագրված գնահատականների և տեսուչների կողմից պատճենահանված ձևաթղթերի համադրման արդյունքում: Չորս աշակերտների քննական ձևաթղթերում դպրոցի ստուգող հանձնաժողովի կողմից կատարվել են նշումներ, ինչի արդյունքում գնահատականները փոփոխվել են:

Ուսումնասիրության ընթացքում քննական ձևաթղթերի և պատճենների համադրման արդյունքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչը քննական թեստերի <<պնդումների փունջ>> (45-րդ կետ) առաջադրանքի ստուգման եղանակին չտիրապետելու հետևանք է: Որոշ դեպքերում սովորողները <<պնդումների փունջ>> առաջադրանքի ենթահարցերի պատասխանները ձևաթղթում չեն լրացրել, և ստուգող հանձնաժողովների անդամները չլրացրած պատասխանները համարել են «սխալ», ինչը ուղեցույցում տվյալ առաջադրանքի պարզաբանման տարրն թերցման հետևանք է: Տեսչության աշխատակիցների կողմից ցուցաբերվել է համապատասխան մեթոդական օգնություն և արդյունքում անճշտությունները շտկվել են:

Ձեռնարկված միջոցառումները

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին:

15. Կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, հիմնախնդիրների, կրթության ցուցանիշների մասին

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը:

Նպատակը՝

<<Կրթության պետական տեսչության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի ապահովումը:

Ժամկետը՝

2014թ. 1-ին կիսամյակ:

Ուսումնասիրությունների արդյունք՝

ՀՀ Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի թվով 146 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմվել է հաշվետվություն կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին

բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին: Հաշվետվությունը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

16. Ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, գործունեության վերլուծություն

Հիմքը՝

«ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2014 թվականի աշխատանքային ծրագիրը:

Նպատակը՝

«ՀՀ կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովումը:

Ժամկետը՝

2014թ. 1-ին կիսամյակ:

Ուսումնասիրությունների արդյունք՝

Երևան քաղաքի թվով 74 հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքում կազմված վերլուծությունը հրապարակվել է <http://www.kpt.am> կայքում:

17. Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի կատարումը:

Ժամկետը՝

2014 թվականի I կիսամյակ:

ՀՀ մարզեր, Երևան քաղաք	Դիմումների ընդհանուր թիվը (ներառյալ «Թեժ գիծը»)	Դիմումների թիվն ըստ ուսումնական հաստատությունների
Երևան	4	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ, Երևանի հ. 13 երաժշտական հատուկ դպրոց, Երևանի հ. 65 ա/դ (թեժ-գիծ), Երևանի հ. 139 ա/դ (թեժ-գիծ),
Արարատ	1	Այգավանի մ/դ,
Լոռի	1	Ստեփանավանի հ.2 հ/դ,
Գեղարքունիք	2	Ախպրաձորի մ/դ, Կարմիրգյուղի մանկապարտեզ
Արագածոտն	2	Սուսերի մ/դ, Ջովասարի մ/դ
Վայոց Ձոր	1	Հորբատեղի հ/դ (թեժ-գիծ),
Շիրակ	3	Բագրավանի մ/դ, Գյումրու թիվ 40 և 43 հ/դ, Բերդաշենի մ/դ
Ընդամենը	14	

Դիմումներում բարձրացված (նշված) հարցերը	ԵՐԵՎԱՆ	ԱՐԱՑՈՒՄ	ԱՐՄԱ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԼՈՒԻ	ՇԻՐԱԿ	ՎԱՅՈՑ ԶՈՐ
Գործատու-աշխատող հարաբերություններ							1
Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ	3	1	1	2	1	1	1
Աշխատանքի վերականգնվելու հարց						1	
Դրամահավաքություն /դպրոցում/	1						
Տնօրենի՝ նույն դպրոցում աշխատող հարազատների վերաբերյալ				1			1
Տնօրենի վատ, անարդյունավետ աշխատանք	1			1			
Տնօրենի հետագա պաշտոնավարման խնդիր						1	
Տնօրենի կողմից կադրերի ոչ ճիշտ ընտրություն				1	1		1
Դպրոցի զինղեկի վատ աշխատանք						1	
Դպրոցում տիրող անտարբերություն (տնօրենի կողմից)	1						
Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններ	1						
Դպրոցում տիրող լարված և անհանդուրժող բարոյահոգեբանական մթնոլորտ		1					
Կարճված դիմում				1		1	

Այլ տվյալներ՝	
Դիմողին ուղարկվել է պատասխան գրություն	8
Դիմումում նշված փաստարկները մասամբ են համապատասխանում իրականությանը	1
Դիմումում նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը	3
Դիմումում բարձրացված հարցերը դուրս են ՀՀ ԿՊՏ լիազորությունների շրջանակներից	2

18. Համագործակցություն ՁԼՄ-ների հետ

Նպատակը՝

ՀՀ կրթության պետական տեսչության գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը:

Ժամկետը՝

2014 թվականի 1-ին կիսամյակ:

Ձեռնարկված միջոցառումները

- ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում կազմված տեղեկանքները, վերլուծություններն ու հաշվետվությունները հրապարակվել են <http://www.kpt.am> կայքում:

- Տեսչության 2014թ. փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսների գործողությունների ժամանակացույցները հրապարակվել են <http://www.edu.am> , <http://www.kpt.am> կայքերում:

- 2014 թ. փետրվարի 28-ին ՀՀ կրթության պետական տեսչության պետը, տեղակալը և ՎԳ բաժնի պետը Ծաղկաձորի «Գրողների ստեղծագործական տուն» հյուրանոցային համալիրում մասնակցել են «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության տարեկան համաժողովին:

- 2014 թ. մարտին ՎԳ բաժնի պետը մասնակցել է «Բաց հասարակություն հիմնադրամներ - Հայաստան» գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացված «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում» հետազոտության հաշվետվության քննարկմանը:

- 2014թ. ապրիլի 15-ին ՎԳ բաժնի պետը մասնակցել է «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Գենդերային ուսուցման ինտեգրում ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան» ծրագիրն ամփոփող կլոր սեղանին:

- 2014 թ. ապրիլին ՀՀ կրթության պետական տեսչության պետի տեղակալը ԿԱԻ-ում, տեսչության աշխատակիցները՝ ՀՀ կրթության պետական տեսչությունում մասնակցել են «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ժողովրդավարության և մարդու իրավունքի կրթությունը Հայաստանում» ծրագրի հայեցակարգի մշակմանը:

- 2014թ. մայիսի 13-ին ՀՀ կրթության պետական տեսչության պետի տեղակալը «ԱՐ» հեռուստաընկերությանը հարցազրույց է տվել հատուկ դպրոցների կրթական գործունեության մասին:

19. Կազմվել և օրենքով սահմանված ժամկետում հրապարակման է ներկայացվել ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2013 թվականի տարեկան հրապարակային հ ա շ վ ե տ վ ո թ յ ո ն ը:
Հաշվետվությունը հրապարակվել է <http://www.edu.am> կայքում (18.03.2014թ.):

Վերլուծության և գնահատման բաժին